CCAFL COLLABORATIVE CURRICULUM AND ASSESSMENT FRAMEWORK FOR LANGUAGES
AUSTRALIA

| Student/Registration Number | | | | | | | | | | Centre Number | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

**2002** PUBLIC EXAMINATION

# Armenian

## Continuers Level

### Section 2: Reading and Responding (30 marks)

**Instructions to Students**

1. Allow about 1 hour and 15 minutes for Section 2.
2. Write all your answers to the questions in Section 2 in this booklet in blue or black ink or ball-point pen. Space is provided for you to make notes.
3. You must answer ALL questions in Part A and Part B.
4. Answer Part A in ENGLISH and Part B in ARMENIAN.
5. Write your student/registration number and the centre number (if required) on the front cover of this booklet.
6. All question booklets will be collected at the end of the examination.

*This examination is used for the HSC (New South Wales), the NTCE (Northern Territory), the SACE (South Australia), the TCE (Tasmania), the VCE (Victoria), and the WACE (Western Australia).*

© Board of Studies NSW 2002

## Part A

**20 marks**
**Attempt Questions 8–9**

---

*When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:*

- *understand general and/or specific aspects of texts, by, for example, comparing, contrasting, summarising, or evaluating, and convey the information accurately and appropriately*

---

**8.** Read the text and then answer in ENGLISH the questions that follow.

*Դեկտեմբեր 10, 2001*

*Մեսրոպ Մաշտոց Երկրորդական Վարժարան*
*Տնօրէն՝ Պրն. Սահակ Սահակեան*
*Սարդարապատ – Հայաստան*

*Յարգելի՛ Տնօրէն,*

*Ստորագրեալս՝ Յասմիկ Պօղոսեան գրում եմ այս նամակս խնդրելով ձեր միջամտութիւնը եւ օգնութիւնը:*

*Բոլորին ծանօթ Հայաստանի երկրաշարժի եւ տարբեր նեղութիւնների պատճառով, Հայաստանի մէջ ընտանիքիս համար ստեղծուած էր նիւթական դժուարութիւն: Ծնողքս դադրեցրել էին դպրոցական վճարումներս եւ հետեւաբար կիսատ էր մնացել ուսումս:*

*Պայմանները այնպէս դասաւորեցին, որ Աւստրալիա գաղթենք շատ արագ ձեւով՝ Նոյեմբեր 6, 2001 թուականին:*

*Ժամանակը կարճ էր. մի քանի անգամ հանդիպեցի ձեր գրասենեակը խնդրանքս ներկայացնելու, բայց պաշտօնեան կամ ժողովներով էր զբաղուած եւ կամ բացակայ:*

*Վերջին անգամ երկտողով խնդրեցի մի հաստատագիր, որտեղ նշուէր թէ ի՞նչ նիւթերի էի հետեւել 1995-ից մինչեւ 2001ը, որպէսզի կարողանամ այս նոր միջավայրի մէջ ուսումս շարունակել եւ օգտուել ուսումնական բոլոր առաւելութիւններից, որ տրամադրում է այս նոր երկիրը:*

*Դժբախտաբար մինչեւ օրս, ոչ մէկ պատասխան եմ ստացել խնդրանքիս կապակցութեամբ եւ այս հաստատագիրին պէտք ունեմ առաւելագոյնը մինչեւ Փետրուար ամսուայ վերջը, այլապէս վատնելու եմ արժէքաւոր մի տարի: Արձանագրութեան համար այս հաստատագիրը պիտի փրկէ ժամանակ եւ ուսում:*

*Յոյսով եմ, որ անմիջապէս կը կատարէք խնդրանքս եւ աւելի երկար չէք թողնի ինձ այս նեղ կացութեան մէջ:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ*
*Յասմիկ Պօղոսեան*

**Question 8 continues on page 3**

Marks

Question 8 (continued)

(a) Which circumstance has prompted Hasmik to write this letter? **1**

(A) She does not want to waste a whole year. ☐

(B) She has requested this document previously. ☐

(C) She is sick of bureaucracy. ☐

(D) She is always impatient. ☐

(b) Which problems did Hasmik Boghossian encounter whenever she visited the Mesrob Mashdotz Secondary School's office? **2**

...............................................................................................................

...............................................................................................................

...............................................................................................................

...............................................................................................................

(c) Why did Hasmik have to stop her education? **2**

...............................................................................................................

...............................................................................................................

...............................................................................................................

...............................................................................................................

(d) How is Hasmik's mood reflected in the language of her letter? Support your answer with reference to the text. **3**

...............................................................................................................

...............................................................................................................

...............................................................................................................

...............................................................................................................

...............................................................................................................

...............................................................................................................

**End of Question 8**

**9.** Read the text and then answer in ENGLISH the questions that follow.

*Վերջին տասնամեակին ընթացքին, մանաւանդ Սովետական Միութեան անկումէն վերջ, աշխարհի վրայ ստեղծուած է տնտեսական եւ քաղաքական անորոշութիւն։ Զգալի կերպով աւելցած է գործազրկութիւնը։ Տարբեր գաղափարախօսութիւններու պատճառով աշխարհի տարբեր մասերուն մէջ պատերազմներ սկսած են, որոնց պատճառով գաղթականական մեծ տեղաշարժ սկսած է։*

*Վերջին տասնամեակին տնտեսական եւ քաղաքական այս խառն եւ անապահով կացութեան մէջ, սկսան խախտիլ նաեւ ընկերային հիմունքները, մանաւանդ երրորդ աշխարհի երկիրներուն մէջ։ Ասոնց հետեւանքով, արդէն իսկ գոյութիւն ունեցող սեռային խտրականութիւնը եւ ազատութիւնը աւելի տուժեց, մանաւանդ իգական սեռին համար։*

*Արեւմտեան աշխարհը սկսաւ զգուշութեամբ եւ ուշադրութեամբ մօտենալ գաղթականական այս աճող հարցին, որ միեւնոյն ժամանակ Մ.Ա.Կ.-ի մտահոգութեան գլխաւոր հարցն է։*

*Ուսումը, կրթութիւնը, աշխատանքը եւ ազատութիւնը անհատի տարրական իրաւունքներն են անկախաբար իրենց սեռէն։*

*Աւստրալիան, որպէս յառաջադէմ երկիր ծանօթ է իր ազատութիւն եւ հաւասարութիւն քաղաքականութեամբ, որուն հետեւանքով, շատեր կը փափաքին Աւստրալիա հաստատուիլ, ուր կրնան իրենց ապագան կերտել հեռու ամէն տեսակ կաշկանդումներէ եւ մտահոգութիւններէ։*

*Ուսումնական եւ ազատամտութեան բնագաւառներէն ներս կրնանք ըսել, որ Աւստրալիան ամենայառաջադէմ երկիրներէն մէկն է եւ առիթ կ՚ընծայէ իր քաղաքացիներուն հասնելու իրենց նպատակին։*

*Բժշկական եւ գիտական ասպարէզներուն մէջ, այսօր զգալիօրէն մեծ է թիւը իգական սեռին, որոնք կը զբաղեցնեն տարբեր պաշտօններ, որ կարճ ժամանակ մը առաջ աններեւակայելի էր։ Կառավարութիւնը իր կարգին կը յատկացնէ մեծագումար դրամագլուխներ տարբեր ծրագիրներու իրականացման համար։ Այս իգական սեռի պատասխանատուներուն մեծ մասը ծնած են արտասահման եւ կը պատկանին տարբեր մշակոյթներու, որոնցմէ շատեր, եթէ մնային իրենց ծննդավայր երկիրներուն մէջ, շատ հաւանաբար չկարողանային աւարտել նոյնիսկ նախակրթարան կամ երկրորդական վարժարան։*

*Լաւագոյն օրինակներէն մէկը, որ ծանօթ է  Հայ Համայնքի անդամներուն՝ Արփի Արեւեանն է, որ գաղթելով իր ընտանիքին հետ եւ օգտուելով տեղական պայմաններէն եւ ընծայուած առաւելութիւններէն շարունակած է իր ուսումը եւ աւարտած 2 համալսարան, վկայուելով որպէս բժիշկ-վիրաբոյժ։ Արփի Արեւեան ունի 3 դեղատուներ քաղաքի տարբեր թաղամասերուն մէջ։*

*Բժշկուհի Արփի Արեւեան ճանչնալով գաղթականի մը գոյավիճակը, անկախաբար ազգութենէն եւ սեռէն, ցրիաբար կը տրամադրէ իր սպասարկութիւնները բոլոր կարիքաւորներուն եւ կը թելադրէ ու կը քաջալերէ, որ նորահաս գաղթականներ օգտուին երկրին տուած դիւրութիւններէն, որ կարճ ժամանակի մէջ դառնան ինքնաբաւ, արդիւնաբեր ու տիպար քաղաքացի համայնքին ու երկրին։*

**Question 9 continues on page 5**

Marks

Question 9 (continued)

(a) Which title would be most appropriate for this article? **1**

(A) Mobilisation of migrants ☐
(B) Research in science and technology ☐
(C) Freedom and education ☐
(D) Political and economic uncertainty ☐

(b) According to the text, why is Australia a desirable destination for refugees? **2**

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

(c) According to the text, explain what happened during the last decade. **2**

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

(d) Discuss Dr Arpi Arevian's contribution to her new country. **3**

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

**Question 9 continues on page 6**

**Marks**

Question 9 (continued)

(e) What parallels do you see between Dr Arpi Arevian and Hasmik Boghossian in Question 8? **4**

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

..........................................................................................................................

**End of Question 9**

BLANK PAGE

**Please turn over**

## Part B

**10 marks**
**Attempt Question 10**

---

*When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:*

- *understand general and specific aspects of texts by identifying, analysing, and responding to information*
- *convey information coherently (structure, sequence, accuracy and variety of vocabulary and sentence structure) and appropriately (relevance, use of conventions of the text type)*

---

**10.** Read the text and then answer in ARMENIAN the question that follows.

You may make notes in this space.

### *ՀԱՅՈՑ ՆՈՐ ՏԱՐԻՆ*

*Պատմութեան հնագոյն ժամանակներից, ժողովուրդները ունեցել են մի հասկացողութիւն ժամանակը տարիների բաժանելու· անշուշտ տարին ունեցել է սկիզբը, որ կոչել է Ամանոր կամ Կաղանդ:*

*Զանազան ժողովրդների մօտ Ամանորը նշել է տարուան տարբեր եղանակների կամ ամիսների ընթացքում: Բաբելոնում կաղանդը նշւում էր Մարտի կէսերին, Ասորեստանում Սեպտեմբերի կէսերին, Բիւզանդիոնում Դեկտեմբերի 21-ին, իսկ Հռոմէաստանում Մարտ 1-ին:*

*Հայերի պարագային նշւում էր Օգոստոսի 11-ին Նաւասարդի տօն անունով: Այս թուականի հաստատումը կատարուել է հիմնուած այն իրողութեան վրայ, որ Ք. Ա. 2492 թուի Օգոստոս 11-ին Հայկ Նահապետը սպանել է Բռնակալ Բելին եւ ազատութիւն է պարգեւել իր հետեւորդներին:*

*Նաւասարդի գլխաւոր հանդիսութիւնը տեղի էր ունենում Արածանի գետի ափին Թագաւորի, Թագուհու, իշխանների ու հայկական բանակի ներկայութեամբ: Կատարւում էին մարզական մրցումներ եւ դափնեպսակներ էին շնորհւում յաղթողներին: Այս տօնախմբութեան աւանդութիւնն է որ այսօր հասել է մեզի, երբ հայկական մարզական միութիւններ կազմակերպում են մրցումներ, Նաւասարդեան խաղեր անունով:*

*Յունուար 1-ը որպէս նոր տարուայ սկիզբ ընդունեց Հռոմէական Կաթողիկէ եկեղեցւում 1582-ին Գրիգորեան տոմարով ու անմիջապէս տարածւեց եւրոպական մի շարք երկրներում: Հայերը զայն ընդունեցին 1759-ին Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսի տոմարով:*

*Հակառակ այն իրականութեան, որ Յունուար 1-ը դարձել է միջազգային նոր տարուայ տօն, սակայն տակաւին գտնւում են ազգեր, որոնք ընդունելով հանդերձ Յունուարի 1-ը, շարունակում են պահել իրենց աւանդութիւնը ու յիշատակել իրենց պատմական նոր տարուայ թուականները, ինչպէս Չինացիները, Պարսիկները եւ Հրեաները: Աւստրալիան լինելով բազմամշակութային մի երկիր, յարգում է այդ ժողովուրդների իրաւունքները եւ արձակուրդի օր շնորհում այդ ազգութիւնը ունեցող Աւստրալիացի քաղաքացիներին:*

*Հայութեան որոշ խաւերի մէջ տիրում է այն կարծիքը, թէ պէտք է մենք եւս յիշեալ ազգերի նման մեծ հանդիսութիւններով նշենք պատմական Նաւասարդը Օգոստոս 11-ին, ցոյց տալու համար օտարներին մեր մշակոյթն ու մեր ազգի իւրայատկութիւնը:*

---

Based on the text, write a letter to the editor of the local paper explaining the historical importance of the Armenian New Year and the revival of old traditions, as a means of introducing Armenian culture to Australian society.

Your response should be 150–200 words in length.

***Օգտուելով գրութիւնից, գրի՛ր մի նամակ թերթի մը խմբագրութեան, բացատրելով հայկական նոր տարուայ պատմական իմաստը, ինչպէս նաեւ ցոյց տուր թէ Նաւասարդ տօնի այժմէականացումը եւ վերակազմակերպումը լինելու է կարեւոր մի ազդակ հայ ժողովուրդի մշակոյթն ու իւրայատկութիւնը ծանօթացնելու օտարներին:***

*Գրի՛ր 150–200 բառ Հայերէնով:*

*Do not remove this page from the question booklet.*

Student/Registration Number

Centre Number

Armenian Continuers Level

Question 10

**Please turn over**

**End of Section 2**

BLANK PAGE

BLANK PAGE